

Christlichen Welt-ի ասելով այգպիոսի համաժողով պէտք է գումարուի Բրաունշվայգում, որ կտէ սեպտեմբերի 21-ից մինչև 24 (ն. տ.): Այս համաժողովը 32-րդն է, առաջ է բերուած նաև համաժողովի զբաղմունքի ծրագիրը:

— Լայպցիգի համալսարանի աստուածաբանութեան Լիցենցիատ Կունցէ, միաժամանակ հրաւեր ստանալով Ռոստօկի և Վիեննայի համալսարաններէ կողմից, ընդունել է վերջնի առաջարկութիւնը: Առաջիկայ կիսամեակում Լիցենցիատ Կունցէ, իբրև իսկական ուսուցչապետ, Վիեննայի համալսարանում կկարգայ պատմական աստուածաբանութիւն:

— Այն հանգամանքը, որ վերջին ժամանակներս պրուսական կառավարութիւնը համակրալից վերաբերմունք է ցոյց տալիս դէպի Գերմանիայում դտնուած կաթոլիկները, ազգայնականներէ աչքում ծառայում է, իբրև ապացոյց, թէ կարող են այդ պատճառով ազգայնութեան և բողոքականութեան շահերը վտանգուել: Ազգայնականները, որ Ռայխտագում մինչև այժմ միացած կաթոլիկներէ (կենդրոնի) հետ կռուում էին ռամկավարականներէ դէմ, վերջին ընտրութիւնների ժամանակ բաժանուել են նրանցից: Այս իրողութեան առանձնապէս դարկ տուեց Վիլհելմ II կայսեր Վատիկանին առած այցելութիւնը: Այսպիսով ազգայնականները վերջ ու առաջ կմիանան ռամկավարականներէ հետ և կմաքառեն ընդհանուր թշնամու՝ այն է կղերականութեան դէմ: Եւ այս երևոյթը ապագայում խիստ վտանգաւոր դրութիւն կստեղծէ Գերմանիայում կաթոլիկութեան համար:



ԵԿԵՂԵՅԻ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ

Մ Ա Յ Ր Ա Թ Ո Ռ .

Ս. Էջմիածնի տօնը վանքի մէջ այս տարի կատարուեց սովորական կարգով, մինչ լրանում էր նրա դոյութեան 1600 ամեակը և այդ առթիւ տարուայ սկիզբում նախամատածուել էին մի շարք տօնական հանդէսներ: Իւփիւռս երկրի տաքածուած Էջմիածնի հարազատները այս կամ այլ կերպ այդ օրը յատուկ յիշատակութեան արժանի են արել, եկեղեցական տօնախմբութիւններ կատարելով, ճառասութիւններով

յիշատակելով օրուայ նշանակութիւնը, հոյ և օտարազգի լրագիրներում օրուայ նիւթին յարմար յօդուածներ հրատարակելով և փոքրիկ զրքոյլներ լոյս ածելով: Բացի այդ ամենից, Ազգիս Աւհափառ Հայրապետը Ռուսաստանից և արտասահմանից ստացել է բազմաթիւ շնորհաւորական հեռագիրներ, ի պատասխանի որոնց բանիւ բերանոյ պատուիրել է Արարատի խմբագրութեան Իւր Հայրապետական և հայրսիսն օրհնութիւնն ու շնորհակալիքը յայտնել Ս. Էջմիածնի այն հարալստ դաւաճներին, որոնք ինքնաբերաբար տօնելի են կացուցել մեր Մայր Եկեղեցու պահձալի յիշատակը:

Յունիսի 2 և 3 եկեղեցական մեծ հանդէսով տօնուեցան «արքոյ կուսանացն Հսիսիմեանց և Վայկանեանց» յիշատակները: Այդ օրերը երեկոյեան ժամերգութիւնը և յաջորդ օրուայ պատարագը կատարուում է համանուն վանքերում: Բոլոր հանդէսներին ներկայ էր լինում Աւհափառ Հայրապետը, իւր հետն ունենալով Մայր Աթոռի միաբանութիւնը: Պատարագներին երգում էր ճեմարանի աշակերտների երգեցիկ խումբը:

Շարաթ օրը, յունիսի 7-ին, ս. Ռուսաօրդի Ելն ի վերապէն տօնը կատարելուց յետոյ, երեկոյեան Նորին Սրբութիւնը բարեհաճեց մեծ հանդիսաւորութեամբ և թափօրով իջնել եկեղեցի: Եկեղեցու զանգակները զօղանջում էին, հրաւիրելով ժամաւորներին եկեղեցի. միաբանութիւնը շուրջառ առած սպասում էր վեհարանի արտաքին դռան առաջ Հայրապետի իջնելուն: Հայրապետը շուրջառ տօնելով, մտու ամպհովանու տակ և «Հրաշափառ» շարականի երգեցողութեամբ առաջնորդուեցաւ դէպի եկեղեցի:

Հեռեկալ օրը, կաթողիկէ ս. Էջմիածնի տօնին, Աւհափառ Հայրապետը նոյնպէս եկեղեցի իջաւ, ներկայ լինելու ս. պատարագին: Պատարագիչ էր Գեր. Տ. Մեսրոպ արքեպիսկոպոսը, երգում էր ճեմարանի աշակերտները քառաձայն խումբը Տ. Կովնատս վարդապետի ղեկավարու-

Թեամբ: Ա. պատարագից յետոյ՝ եկեղեցու մէջ կատարուեցաւ Հայրապետական մաղթանք, որից յետոյ Մայր Աթոռի միաբանութիւնը, ձեմարանի ուսուցչական խումբն աշակերտներին հետ արժանացան Նորին Արքութեան աջն ասնելու և օրհնութիւնը ստանալու: Նոյն օրը վանքի սեղանատանը կատարուեցաւ հանդիսաւոր ճաշկերոյթ, որին ներկայ էին Թիֆլիզից եկած պատուարժան ուխտաւորներ թէ հոգեւորական և թէ աշխարհական դասակարգից, ինչպէս նաև Երևանից և ուրիշ տեղերից: Վեհափառ Հայրապետը չկարողացաւ ճաշկերոյթին ներկայ լինել յոգնած լինելուն պատճառով: Նա օրհնեց սեղանը և խօսեց ս. Եջմիածնի տօնի առթիւ, ապա բարեհաճեց դառնալ վեհարան, թողնելով հանդէսը շարունակել միաբանութեան: Խօսուեցան զանազան ծառեր, առաջարկուեցան Վեհափառ Հայրապետի. Մայր Աթոռի հաստատութեան, միաբանութեան, հայ ժողովրդի և ուրիշ կենացներ: Իւրաքանչիւր կենաց բաժակից յետոյ ձեմարանի խումբը երգում էր պատշաճաւոր երգ:

Նոյն օրը երեկոյեան վանքի բակում և ձեմարանում հրաւիրութիւն կար. ներկայ էր ժողովրդի մեծ բազմութիւն Երևանից, Վաղարշապատից և շրջակայ զանազան գիւղերից:

Յունիսի 18-ին Վեհափառ Հայրապետը բարեհաճեց Երևան մեկնել և հեռեւեալ օրն այնտեղից դէպի Սեան, ապա Հաղարծին: Ամսոյս 27-ին Նորին Արքութիւնը բարեհաճեցաւ Ալէքսանդրապոլի վրայով երկաթուղով վերադառնալ Մայր Աթոռ: Վեհ. Հայրապետին ուղեկցում էին Դեր. Յովհաննէս և Ասրղիս եպիսկոպոսները և Տ. Կորիւն վարդապետը: Վեհափառ Հայրապետին Կարխուն կայարանի դիմաւորելու զնացին Դեր. Տ. Ղեոնդ եպիսկոպոսը և Տ. Աշոտ վարդապետը:

Յուլիսի 24-ին Մայր Աթոռ եկաւ Ծնորհ. Պօղոս սարկաւազ Զուրարեանը, որ ուսանում է Ս. Պետրբուրգի Կայսերական Համալսարանի՝ իրաւաբանական բաժնում: Նա կրկին կվերադառնայ իւր ուսումը շարունակելու համար:

Ամսոյս 26-ին, ս. Սահակ և ս. Մեսրոփը թարգմանիչների տօնին Օշականի եկեղեցւում, որտեղ գտնուում է ս. Մեսրոփի շիրիմը, հանդիսաւոր պատարագ մատուցուեց: Օշական էին գնացել Գեր. Ղևոնդ և Յուսիկ եպիսկոպոսները, բարձր. Յուսիկ և Մամբրէ վարդապետները և Ծնորհ. սարկաւազները: Պատարագիչն էր Բարեշ. Մեսրոփ արեղան. երգում էին ձեմարանի աշակերտները: Պատարագից յետոյ հոգեհանգիստ կատարուեցաւ զանազան կողմերից ուխտաւոր ժողովրդի ներկայութեան ս. Մեսրոփի յիշատակին:

ՃԵՄԱՐԱՆ Մ. ԱԹՈՌՈՅ

ձեմարանում քննութիւնները սկսուեցան ապրիլի 14-ին և վերջացան մայիսի 31-ին: Զորդ դասարանում և Գորդ լսարանում կատարուեցան բոլոր առարկաներից հրապարակական քննութիւններ: Իսկ ա. և բ. լսարաններում և դպրոցական միւս դասարաններում միայն աւարտած առարկաներից ուլիզուներից, այլ և այն առարկաներից, որոնցից մանկավարժական ժողովն անհրաժեշտ համարեց քննութիւն անել:

Դպրոցական բաժինն աւարտեցին 19 հոգի, որոնցից 14-ը կշարունակեն իրենց ուսումը մասնագիտական բաժնում: Իսկ մասնագիտական բաժինն աւարտեցին 13 հոգի, նախապէս ներկայացնելով իրենց աւարտական շարադրութիւնները: Դոքա են՝